# Արձանագրություն N 2

## ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/47 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

08 սեպտեմբերի 2017թ.
ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Գևորգ Ղազարյան |
| (ԲԱ)՝ | Լիլիթ Մազդեսյան |
| քարտուղար՝ (ՄՀՄ) | Հայկ Խաչատրյան |

### Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության պլանավորված գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Գնվելիք ծառայությունների | | Հայտ ներկայացրած մասնակցի | |
|---|---|---|---|---|
| | անվանումը | պլանավորված գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ |
| 1 | Հասարակության հետ կապերի խորհրդատվական և ռազմավարական հաղորդակցության ծրագրի մշակման ծառայություններ | 14,260,800 | «Ալտեռա» ՍՊԸ | 12,900,000 (տասներկու միլիոն ինը հարյուր հազար) |

07.09.2017թ.-ի ժ 10:00-ին հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր: Երկրորդ բացող անդամի բացակայության պատճառով, ում ներկայանալը հանձնաժողովի նիստին ապահովելը անհնար էր, նշանակվել է հանձնաժողովի նոր բացող անդամ: Երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել է «Ալտեռա» ՍՊԸ-ն / ք. Երևան, Արշակունյաց պող., 3-րդ շ., 3-րդ հարկ /:
Ոչ մի հայտ հետ չի կանչվել և չի փոփոխվել:
Հայտերի վերաբերյալ հարցումներ (պարզաբանումներ) չեն եղել:

1. «Ալտեռա» ՍՊԸ

1.1 Հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան.

1.2 Բացված հայտում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.

1.3 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

1.4 Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտը գնահատվել է բավարար:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ԳՀԾՁԲ-17/47 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Ալտեռա» ՍՊԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 2017թ.-ի սեպտեմբերի 14-ի ժամը 16:00-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

Գնահատող հանձնաժողովի

նախագահ (ԳԱՊ)՝ ________ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամներ (ԳԱ)՝ ________ Աշոտ Ավետիսյան

(ԳԱ)՝ ________ Դավիթ Գրիգորյան

բացող անդամներ (ԲԱ)՝ ________ Գևորգ Ղազարյան

(ԲԱ)՝ ________ Լիլիթ Մաղդեսյան

քարտուղար՝ (ՄՀմ) ________ Հայկ Խաչատրյան